



Արսեն ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

*ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ*

Առնոլդ ՎԱՐԳԱՆՅԱՆ

*ՀՀ վճռաբեկ դատարանի քրեական պալատի դատավորի ավագ օգնական,
ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտ*

**ԴԱՏԱԽԱՁԻ ԿՈՂՄԻՑ ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՁԵՌՔԲԵՐԵԼՈՒ
ՔՐԵԱԴԱՏԱՎԱՐԱԿԱՆ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՀԱՐԱՔԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻՆՉԴԱՏԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ
ՕՐԻՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ
ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԳՈՐԾԱՌՈՒՅԹԻ ՀԵՏ**

Քրեական վարույթի հանրային մասնակիցների հստակ դատավարական կարգավիճակի ամրագրումը, նրանց ունեցած լիազորությունների հստակ սահմանազատումը քրեական դատավարությունում ունի առանցքային նշանակություն և հիմնարար երաշխիք է հնարավոր չարաշահումները բացառելու, անձի իրավունքներն ու օրինական շահերը պաշտպանելու համար: Այսպես՝ քրեական վարույթի հանրային մասնակիցների դատավարական փոխհարաբերակցությունների անհստակությունները գործնականում հանգեցնում են այնպիսի իրավիճակների, երբ միևնույն լիազորությունը կենսագործելու հնարավորությամբ օժտվում են տարբեր դատավարական հարթություններում գտնվող քրեական վարույթի հանրային մասնակիցներ, որի արդյունքում շրջանցվում է քրեադատավարական ինստիտուտների հիմքում ընկած գաղափարախոսությունը, խախտվում է քրեադատավարական իրավահարաբերությունների մասնակիցների փոխհարաբերությունների հիմքում ընկած հակակշիռների համակարգը, վտանգվում են անձանց իրենց իրավունքների նկատմամբ իրականացվող միջամտությունից պաշտպանելու իրավական երաշխիքները:

2015 թվականի խմբագրությամբ, ՀՀ

Սահմանադրության 176-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ դատախազությունն օրենքով սահմանված դեպքերում և կարգով՝ հսկողություն է իրականացնում մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ:

Մինչդատական վարույթի ընթացքում դատախազի ունեցած լիազորությունների սպառիչ ցանկը բացահայտված է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասում, որի համաձայն՝ «Դատախազը մինչդատական վարույթի ընթացքում լիազորված է՝

(...),

2) (կետն ուժը կորցրել է 22.02.07 ՀՕ-129-Ն),

3) հանցագործության դեպքով հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել նախապատրաստել նյութեր քրեական գործ հարուցելու համար,

4) հետաքննության մարմնին և քննիչին հանձնարարել կատարելու անհետաձգելի քննչական գործողություններ,

5) (կետն ուժը կորցրել է 28.11.07 ՀՕ-270-Ն),

6) հետաքննության և նախաքննության նկատմամբ իրականացնել դատավարական ղեկավարում»:

Վերոնշյալ իրավադրույթի վերաբերյալ «Travaux préparatoires»-ի ուսումնասիրության արդյունքում պարզ է դառ-

նում, որ հիմք ընդունելով ԱՊՀ անդամ պետությունների կողմից 1996 թվականի փետրվարի 17-ին Սանկտ Պետերբուրգում կայացված որոշմամբ ընդունված մեկ միասնական քրեական դատավարության մոդելային օրենսգիրքը (այսուհետև՝ Մոդելային օրենսգիրք)՝ մինչդասական վարույթի ընթացքում դատախազի ունեցած լիազորությունների առումով ի սկզբանե ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում ընդօրինակված է եղել մի մոդել, որի պարագայում դատախազությունն օժտված էր ինչպես անձամբ նախաքննություն իրականացնելու, այնպես էլ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու իրավասությամբ: Մասնավորապես, Մոդելային օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետից գործող քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետ էր տեղափոխվել կարգավորումն այն մասին, որ դատախազն իրավասու է անձամբ իրականացնելու նախաքննություն՝ ընդունելով անհրաժեշտ որոշումներ և իրականացնելով քննչական և այլ դատավարական գործողություններ:

Սակայն «Դատախազության մասին» 2007 թվականի օրենքի ընդունմամբ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում 2007 թվականի փետրվարի 22-ի թիվ ՀՕ-129-Ն օրենքով կատարված փոփոխությունների և լրացումների արդյունքում դատախազության կողմից անձամբ նախաքննություն կատարելու իրավասությունը վերացվեց: Ընդունված օրենքով կատարվեց դատախազության մարմնի և նախաքննություն իրականացնող մարմնի միջև ինստիտուցիոնալ և ֆունկցիոնալ տարանջատում: Դրա վերաբերյալ օրենսդրի կամքի բացահայտման իրավամեկնաբանման հնարքը կիրառելու (այլ կերպ՝ օրենքի ընդունման հիմնավորումներն ուսումնասիրելու) արդյունքում պարզ է դառնում, որ դատախազության կողմից անձամբ նախաքննություն իրականացնելու լիազորությունն ուժը

կորցրած ճանաչվեց պայմանավորված հանրապետության Նախագահի՝ 2006 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆԿ-28-Ա կարգադրությամբ սկիզբ դրված դատաիրավական համակարգի բարեփոխումների հայեցակարգով՝ հիմք ընդունելով նաև դատախազության առաջադեմ համակարգեր ունեցող երկրների հարուստ փորձը: Մինևույն հիմնավորումներում նշված է նաև, որ օրենքի ընդունման կարևորությունը պայմանավորված էր դատախազության՝ քաղաքակիրթ երկրներին հարիր համակարգ ունենալու անհրաժեշտությամբ:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ հանրապետության Նախագահի՝ 2006 թվականի փետրվարի 17-ի թիվ ՆԿ-28-Ա կարգադրությամբ սկիզբ դրված դատաիրավական համակարգի բարեփոխումները հաջորդում էին 2005 թվականի խմբագրությամբ ՀՀ Սահմանադրության տեքստի ընդունմանը և նպատակ էին հետապնդում ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդող անցումային շրջանը հաղթահարելուց հետո ՀՀ օրենսդրությունը մշակել գործող Սահմանադրությանը, միջազգային իրավական պահանջներին համապատասխան կարգով:

Հենց այդ համագամանքով էր նաև պայմանավորված դատախազության կողմից նախաքննություն կատարելու լիազորությունն ուժը կորցրած ճանաչելու անհրաժեշտությունը: Մասնավորապես՝ գործող քրեական դատավարության օրենսգիրքը դատախազության կողմից անձամբ նախաքննություն կատարելու լիազորության առումով ողջամտորեն հակադրվում էր նաև ՀՀ Սահմանադրությամբ նախատեսված դատախազության լիազորություններին, որոնք մինչդասական վարույթում սահմանափակվում էին և ներկայումս էլ սահմանափակվում են քրեական հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության իրականացնելու իրավասությամբ:

Ամփոփելով վերոգրյալը՝ արձանա-



գրում ենք, որ 2007 թվականի փետրվարի 22-ի թիվ ՀՕ-129-Ն օրենքի ընդունումից ի վեր դատախազությունն այլևս իրավասու չէ անձամբ նախաքննություն իրականացնել՝ կատարելով քննչական և այլ դատավարական գործողություններ:

Ներկայումս գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում քրեական գործով նախաքննության ընթացքում դատախազի առաքելությունն է հանդիսանում օրինականության նկատմամբ հսկողության իրականացումը, որի բովանդակությունն, ըստ էության, արտահայտվում է անձի և քաղաքացու իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության անհրաժեշտությունից ելնելով քննիչին դատավարական որոշակի գործողություններ կատարելու ցուցում տալու կամ նրա որոշումները վերացնելու ձևով¹:

Նշված սահմանադրաիրավական գործառույթի (թեև ՀՀ Սահմանադրության տեքստում այն բնորոշվում է որպես «լիազորություն», սակայն գրականությունում օգտագործվում է «գործառույթ» եզրույթը՝ հաշվի առնելով, որ Սահմանադրությամբ վկայակոչված են դատախազության գործունեության հիմնական ուղղությունները, այսինքն՝ գործառույթները²) կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արտահայտել է հետևյալ իրավական դիրքորոշումը. «Եթե հետաքննության, նախաքննության իրականացումը պետական իրավասու մարմինների՝ օրենքով նախատեսված բացառիկ լիազորությունն է, ապա այդ գործունեության նկատմամբ հսկողության (դատավարական հսկողության) իրականացումը դատախազության սահմանադրական գործառույթն ու պարտականությունն է»³:

Մինևս ժամանակ, ՀՀ Սահմանադրական դատարանն ընդգծել է, որ «մի կողմից հետաքննության, նախաքննության մարմինների, մյուս կողմից՝ դատախազության միջև գործառութային տարանջատումը համահունչ է ՀՀ Սահմանադրության (2005 թ. փոփոխություններով) 5-րդ հոդվածի, 89-րդ հոդվածի 7-րդ կետի և 103-րդ հոդվածի պահանջներին և կարևոր երաշխիք է հանցավոր ոտնձգություններից մարդու իրավունքների ու ազատությունների արդյունավետ պաշտպանությունն ապահովելու տեսանկյունից»⁴:

ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը 53-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսում է մինչդատական վարույթում դատախազի կողմից հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազի ունեցած բացառիկ լիազորությունների ցանկը (ինչպես օրինակ՝ գրավոր ցուցումներ տալը, քննիչի գործողությունների դեմ ներկայացված բողոքը քննարկելը, քննիչին հայտնած բացարկը լուծելը և այլն):

Բացի այդ՝ նույն հոդվածի 3-րդ մասում նախատեսված են մինչդատական վարույթում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս դատախազի ունեցած այլ լիազորությունները, որոնք բացառիկ չեն համարվում և կարող են իրականացվել վարույթի ընթացքում նաև դատավարության այլ մասնակիցների կողմից: Սակայն կարևոր է ընդգծել, որ թեև այդ լիազորությունները կարող են իրականացվել նաև դատավարության այլ մասնակիցների կողմից, սակայն հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու համատեքստում կարող են ի կատար ածվել բացառապես դատախազի կողմից: Այսինքն՝ օրենսդրի կողմից դրանք նախատեսվել են դատախազի «այլ լիազորությունների» շարքում՝ ելնելով միայն դրանց բնույթից: Այսպես, օրինակ, հետաքննության մարմնից օպերատիվ-հետախուզական գործունեության իրականացման և հանցագործությունների բացահայտման, անհայտ կորած անձանց և կորած գույքի հայտնաբերման ուղղությամբ ձեռնարկվող միջոցառում-

ների մասին տեղեկությունների ստացման լիազորությունը կարող է իրացվել ինչպես դատախազի, այնպես էլ քննիչի կողմից: Սակայն եթե քննիչը նշված լիազորությունից օգտվում է քրեական գործով նախաքննության հետագա կատարումը պլանավորելու նպատակով, ապա դատախազն այդ լիազորությունից օգտվում է նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով, պարզելու համար, թե ինչ փուլում են գտնվում ձեռնարկվող միջացառումները, ինչ արդյունքներ են ստացվել լրացուցիչ քննչական կամ այլ դատավարական գործողությունների կատարման վերաբերյալ քննիչին հանձնարարություններ տալու համար⁵:

Մինչև ժամանակ չէ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասում նախատեսված հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազի այլ լիազորությունների ներքո թվարկվում է նաև ապացույցների ձեռքբերմանն ուղղված գործողություններ, ինչպիսիք են՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու կամ բնակարանը խուզարկելու միջնորդությամբ դատարան դիմելը:

Այսպես՝ չէ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետի համաձայն՝ «[նախաքննության և հետաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելիս դատախազն իրավասու է նաև] դիմել դատարան՝ (...) նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության միջնորդություններով»:

Վերոնշյալ կարգավորման պարագայում օրենսդիրը նշված միջնորդությունների ներկայացումը նախատեսել է դատախազի՝ հետաքննության և նախա-

քննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելու լիազորության համատեքստում:

Մինչդեռ անհրաժեշտ ենք համարում փաստել, որ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելը, հեռախոսային խոսակցությունները լսելը, բնակարանի խուզարկությունը, որոնք նաև չէ քրեական դատավարության օրենսգրքի 31-րդ և 33-րդ գլուխների կարգավորումներով դասվում են քննչական գործողությունների շարքին, դուրս են գտնվում դատախազի՝ հետաքննության և նախաքննության նկատմամբ դատավարական ղեկավարում իրականացնելու գործառույթի սահմաններից: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ նախաքննության ընթացքում քննչական գործողությունների կատարման և դրանց արդյունքում ձևավորող ապացույցները ձեռքբերող միակ դատավարական սուբյեկտը քննիչն է, որի կողմից կատարվող գործողությունների օրինականությունը միայն կարող է հսկվել, այլ ոչ թե անձամբ կատարվել դատախազի կողմից:

Գործի հետագա ընթացքը կանխորոշող գործողություններ կատարելիս քննիչի բացառիկ իրավասության մեջ է մտնում անհրաժեշտ քննչական և այլ դատավարական գործողությունների կատարումը: Վերջինս նաև պայմանավորված է չէ քրեական դատավարության օրենսգրքի 55-րդ հոդվածով քննիչի համար երաշխավորված դատավարական ինքնուրույնությամբ, որը ենթադրում է գործի հետագա ընթացքի պլանավորում՝ կատարման ենթակա գործողությունների ցանկի որոշմամբ:

Մինչդեռ դատախազը, ելնելով իր սահմանադրական գործառույթներից, օժտված է քննիչի կողմից կատարվող գործողությունների օրինականությունը հսկելու, անհրաժեշտության դեպքում՝ չկատարված գործողությունների կատարման վերաբերյալ ցուցումներ տալու, դրանք ի կատար ածելու ուղղությամբ մի-

ԱՄՅԻԱ - ՀՈՒՆԻՍ 2018 5 - 6 (227-228)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



շոցների ձեռնարկելու իրավասությամբ⁶: Հակառակ պարագայում, երբ դատախազն անձամբ ստանձնի քննչական և դատավարական գործողությունների կատարման իրավասությունը, ապա ոչ միայն դուրս կգա նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու իր գործառնության սահմաններից, այլ նաև վտանգի տակ կղնի քննիչի ունեցած դատավարական ինքնուրույնությունը⁷:

Արդյունքում՝ գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում օրենսդիրն ամրագրել է նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության այնպիսի լիազորություններ, որոնց կրողը, առանց դրանց իրացման սահմանային տարբերության, կարող է լինել ինչպես քննիչը, այնպես էլ դատախազը: Այսինքն՝ քննիչի ունեցած լիազորության բովանդակության հետ համընկնող լիազորություն ունենալով՝ դատախազը գործող քրեադատավարական կարգավորումների պայմաններում փաստացիորեն օժտված է էպիզոդային նախաքննություն իրականացնելու իրավասությամբ: Այսինքն՝ օժտված է ոչ միայն քրեական հետապնդում հարուցելու, այլ նաև քրեական հետապնդում իրականացնելու իրավասությամբ, ինչն առավել բնորոշ է անգրասաքսոնական իրավական համակարգ ունեցող երկրներին⁸: Դրա հետ մեկտեղ հարկ է նշել, որ իրավունքի դոկտրինայի ժամանակակից աղբյուրներում առաջ է քաշվում այն մտեցումը, որ դատախազի կողմից նախաքննության ընթացքի նկատմամբ միջամտության իրականացման սահմանները պետք է արտահայտվեն խիստ սահմանափակ ձևով, մույնիսկ քննիչին հանձնարարություններ տալիս դատախազը չպետք է մատնանշի կատարման ենթակա քննչական կամ այլ դատավարական գործողության կոնկրետ տեսակը, այլ պետք է ընդամենը

նշի ձեռքբերման ենթակա անհրաժեշտ տվյալը, իսկ այն ստանալու դատավարական ուղին որոշելու իրավասությունը պետք է գտնվի քննիչի բացառիկ իմացության ոլորտում: Այսինքն՝ առաջ է քաշվում պասիվ դատախազական հսկողություն իրականացնելու գաղափարը⁹, որը նաև ժամանակի ընթացքում ներդրվում է ռոմանագերմանական իրավական համակարգ ունեցող հետխորհրդային երկրների քրեական դատավարության օրենսգրքերում:

ՀՀ-ում ներկայումս դատախազը չունի քրեական հետապնդում իրականացնելու գործառնություն: Սակայն գործող քրեադատավարական օրենսգրքի մակարդակով շարունակվում են պահպանվել այնպիսի կարգավորումներով, որոնց ուժով դատախազն իրավասու է մի կողմից քննչական գործողության կատարման միջնորդություն ներկայացնել դատարան, մյուս կողմից՝ հսկողություն իրականացնել այդ գործողության օրինականության նկատմամբ, որպիսի մոտեցումը մեր համոզմամբ անհամատեղելի է դատախազի՝ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու սահմանադրական գործառնության հետ: Վերջինս պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ արդյունքում նախաքննությունն իրականացնող մարմնի և հսկողություն իրականացնող դատախազի գործառնության տարանջատումն ապահովված չի լինում:

Արդյունքում նաև վտանգի տակ է դրվում գործառնություն-ինստիտուտ-իրավասություն եռամիասնության շղթան: Մասնավորապես՝ ՀՀ սահմանադրական դատարանը 2008 թվականի հոկտեմբերի 14-ին կայացված թիվ ՍԳ-Ո-766 որոշման 6-րդ կետում հայտնել է, որ գործառնություն-ինստիտուտ-իրավասություն եռամիասնության մեջ ինստիտուտն ու իրավասությունը միջոց են գործառնության իրականացնելու համար, որը ներկայացուցչական ժողովրդավարության սկզբունքների հիման վրա տեղի է ունենում Սահմանադր-

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2018 5 - 6 (227-228)

ԴԱՏԱՎԱՐ
Իշխանություն

րությամբ և օրենքներով նախատեսված կառուցակարգերի, կոնկրետ լիազորությունների, ձևերի ու մեթոդների շրջանակներում, որոնց արդյունքում երաշխավորվում է պետության ողջ տարածքում հասարակական հարաբերությունների կանոնակարգումը (համապարտադիր վարքագծի կանոնների սահմանումը) և դրանց իրացման ապահովումը:

Նշված իրավական դիրքորոշման հաշվառմամբ պետք է փաստել, որ դատախազի՝ նամակագրության, փոստային, հեռագրական եւ այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունների լսման, բնակարանի խուզարկության միջնորդություններ ներկայացնելու քրեադատավարական իրավասության շրջանակը դուրս է գտնվում ՀՀ Սահմանադրության 176-րդ հոդվածով դատախազին վերապահված՝ մինչդատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառնության շրջանակներից: Ուստի՝ մեր համոզմամբ՝ դատախազին քննչական գործողություն կատարելու իրավասություն վերապահելը վտանգում է գործառնության ինստիտուտ-իրավասություն եռամիասնության շրջան, քանի որ ինքնին իրավասությունը ներդաշնակության մեջ չի գտնվում սահմանադրորեն նախատեսված՝ հսկողություն իրականացնելու գործառնության հետ:

Մինևույն ժամանակ դատախազի՝ ապացույց ձեռքբերելու միջնորդությունները բավարարվելու արդյունքում դրանք քննիչի կողմից ի կատար ածելը թեև չի փոխում իրողությունն առ այն, որ այդ դեպքում ևս դատարանից նույնիսկ նախնական թույլտվություն ստանալիս դատախազը հանդես չի գալիս որպես հսկողություն իրականացնող մարմին, սակայն այդ կապակցությամբ անհրաժեշտ ենք համարում մշել հետևյալը.

Մասնավորապես, եթե նույնիսկ դատախազի կողմից դատարան ներկայացված՝ քննչական գործողության կատարման միջնորդությունը բավարարելու

արդյունքում փաստացիորեն այն կատարի քննիչը, ապա այդ հանգամանքը չի կարող հիմք հանդիսանալ դատախազի գործողությունն իր գործառնություններին համապատասխան համարելու համար: Այսպես, մեր համոզմամբ անկախ այն հանգամանքից, թե քննչական գործողությունը փաստացիորեն ով է կատարում, այդ գործողության կատարման արդյունքում ակնկալվող ապացույցը «ձեռքբերող» սուբյեկտի կարգավիճակով հանդես է գալիս այն դատավարության մասնակիցը, ով կայացնում է այն ստանալու (ինչպես նաև թույլտվություն ստանալու միջնորդության) վերաբերյալ համապատասխան որոշում (օրինակ՝ մուշ ստանալու վերաբերյալ որոշումը թեև կայացնում է քննիչը, սակայն այն կատարում է համապատասխան մասնագետը, կամ արտաշիբիմում կատարելու վերաբերյալ որոշումը թեև կայացնում է քննիչը, սակայն այն կատարում են համապատասխան աշխատակիցները, այսինքն՝ մասնադեպքում այդ ապացույցը «ձեռքբերող» սուբյեկտի կարգավիճակով հանդես է գալիս հենց քննիչը): Վերջինս համանման կերպով կիրառելի է նաև նախնական դատական վերահսկողություն պահանջող քննչական գործողությունների դեպքում, երբ միջնորդությունը դատարան կարող է ներկայացնել դատավարության մի մասնակիցը, իսկ այն կատարողի դերում լինել մեկ ուրիշը (օրինակ՝ եթե բնակարանի խուզարկության միջնորդությունը դատարան ներկայացնի քննիչը, իսկ այն կատարեն հետաքննության մարմնի աշխատակիցները, ապա տվյալ դեպքում ևս որպես ապացույցը «ձեռքբերող» սուբյեկտի կարգավիճակով հանդես է գալիս հենց քննիչը, այլ ոչ թե հետաքննության մարմնի աշխատակիցները): Հետևաբար՝ դատախազի կողմից քննչական գործողությունների կատարման միջնորդություն դատարան ներկայացնելիս հենց դատախազն է հանդես գալիս որպես դրանց կատարման արդյունքում ակնկալվող ապացույցը «ձեռք բերող»



սուբյեկտ և այն քննիչի կամ դատավարության որևէ այլ մասնակցի կողմից ի կատար ածելը որևէ կերպ չի փոխում իրողությունն առ այն, որ այդ պարագայում դատախազը դուրս է գալիս իր կողմից նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորության սահմաններից:

Վերոգրյալի հետ մեկտեղ հարկ է նշել, որ դատախազների դերին նվիրված միջազգային իրավական փաստաթղթերի և միջազգային փորձի ուսումնասիրությունը ևս ցույց է տալիս, որ դատախազները մինչդեռատական վարույթի օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս պետք է սահմանափակվեն միայն համապատասխան հանձնարարություններ կամ ցուցումներ տալով:

Այսպես՝ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը 2011 թվականի հունվարի 3-ի թիվ CDL-AD(2010)040 գեկույցի 74-րդ կետում հատուկ ընդգծվել է, որ դատախազի և քննիչի առանձնացվածությունը դրական առումով նվազեցնում է մեկ ինստիտուտի կողմից իր լիազորությունների չարաշահման ռիսկը:

Բացի այդ՝ ԵՖ նախարարների կոմիտեի՝ քրեական դատավարության համակարգում հանրային դատախազության դերի վերաբերյալ 2000թ. հոկտեմբերի 6-ին ընդունված թիվ REC(2000)19 եզրակացության 22-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ այն երկրներում, որտեղ դատախազը հսկում է քննություն իրականացնող մարմինների գործունեությունը, պետությունները պետք է ձեռնարկեն արդյունավետ քայլեր, որպեսզի հանրային դատախազների համար ապահովված լինի քննություն իրականացնող մարմին հանձնարարությունների տրամադրումը հանցավորության դեմ պայքարի քաղաքականությունում առաջնահերթությունները որոշելու, մասնավորապես՝ առաջին հերթին լուծման ենթակա գործերը, ապացույցների ձեռքբերման միջոցները, մասնակցող անձանց շրջանակը, նախաքննության տևողությունը, դատախազին

տրամադրվող տեղեկատվությունը և այլ հարցեր որոշելու համար:

Բացի այդ՝ Եվրոպական դատախազների խորհրդակցական խորհրդի (CCPE) 2015 թվականի նոյեմբերի 20-ի քրեական գործերի քննության ընթացքում դատախազների դերի մասին թիվ CCPE(2015)3, No.10 (2015) հանձնարարականի համաձայն՝ դատախազները որպես կանոն պետք է լուծեն քրեական հետապնդման հարուցման հարցը, ինչպես նաև հսկողություն իրականացնեն նախաքննության օրինականության և մարդու իրավունքների պաշտպանության նկատմամբ: Այդպիսի իրավասություն կրող դատախազական համակարգ ունեցող երկրներում դատախազներն օժտված են նախաքննական մարմիններին պարտադիր կատարման ենթակա ցուցումներ, հանձնարարություններ կամ ուղեցույցներ տրամադրելու իրավասությամբ՝ նպատակ հետապնդելով երաշխավորել քրեական իրավունքի նյութական և դատավարական կանոնները, ինչպես նաև պաշտպանել «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված իրավունքները:

Միջազգային իրավական փորձն ուսումնասիրելիս անհրաժեշտ ենք համարում նաև նշել, որ որպես այդպիսին Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովն ընդունելի է համարում բացառիկ դեպքերում դատախազի կողմից ապացույց ձեռքբերելը, երբ դա պայմանավորված է լինում հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու լիազորությամբ:

Մասնավորապես՝ Ուկրաինայի՝ «Դատախազության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովը 2013 թվականի հոկտեմբերի 14-ի թիվ CDL-AD(2013)025 եզրակացության 104-րդ կետում նշել է, որ դատախազի կողմից հարցաքննություն իրականացնելու վերաբերյալ կարգավոր

րումը պետք է սահմանափակված լինի միայն հսկողություն իրականացնելու լիազորության իրականացման սահմաններով: Այլ կերպ՝ դատախազը կարող է հարցաքննություն իրականացնել իր հսկողական լիազորությունն իրականացնելու նկատառումներից ելնելով:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով դատախազի համար նման լիազորություն սահմանված չէ, սակայն անհրաժեշտ ենք համարում ընդգծել, որ եթե դատախազի կողմից հարցաքննության իրականացումը կարող է որոշ դեպքերում պայմանավորված լինել նրա կողմից իր հսկողական լիազորությունն իրականացնելու անհրաժեշտությամբ (օրինակ՝ քննիչին հայտնաժ քացարկի կապակցությամբ անհրաժեշտ տվյալներ պարզելու կամ ներկայացված քացարկում մատնանշվող՝ քրեական օրենքով արգելված արարքի կատարման տեղեկությունները քրեադատավարական կարգով ստանալու և դրանց ընթացք տալու նկատառումներից ելնելով), ապա նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունների լսման կամ բնակարանի խուզարկության անհրաժեշտությունը որևէ կերպ չի կարող դիտարկվել դատախազի կողմից հսկողություն իրականացնելու գործառնության համատեքստում: Այսինքն՝ գործով անցնող անձի նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելը, հեռախոսային խոսակցությունները լսելը կամ բնակարանը խուզարկելը որևէ կերպ

չի կարող օժանդակել դատախազի՝ նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելու գործառնության: Հենց այդ հանգամանքով է նաև պայմանավորված այն հանգամանքը, որ ներկայումս շրջանառության մեջ է դրվել «ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծ, որով, ի թիվս այլոց, առաջարկվում է ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 53-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կետից հանել «նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսելու, բնակարանի խուզարկության» բառերը:

Այսպիսով՝ ամփոփելով վերոգրյալը գտնում ենք, որ քննիչի՝ նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների վրա կալանք դնելու, հեռախոսային խոսակցությունները լսման, բնակարանի խուզարկության միջնորդություն ներկայացնելու լիազորության կրկնօրինակումը դատախազի կողմից դուրս է գտնվում նրա ունեցած սահմանադրական գործառնության շրջանակից: Կարծում ենք, որ քրեական գործի նախաքննության ընթացքում այդպիսի միջնորդության ներկայացման լիազորությունը պետք է վերապահված լինի միայն քննիչին, քանի որ վերջինս հանդիսանում է այդ իրավասության իրական կրողը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ քրեական գործով նախաքննություն իրականացնելու իրավասությունը վերապահված է միայն նրան:

¹ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2009 թվականի դեկտեմբերի 7-ի թիվ ՍԴՌ-844 որոշման 8-րդ կետը, Լաուրա Չարյանի գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 2010 թվականի փետրվարի 12-ի թիվ ԵԿԳ/0081/11/09 որոշման 13-րդ կետը

² Տե՛ս ընդ. խմբ. Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Հայաստանի Հանրապետության

Սահմանադրության մեկնաբանություններ, Երևան, Իրավունք հրատ., 2010 թ., էջեր 1001-1002:

³ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՍԴՌ-1236 որոշման 6-րդ կետը:

⁴ Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի՝ 2015 թվականի նոյեմբերի 27-ի թիվ ՍԴՌ-

ԱՄՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2018 5 - 6 (227-228)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



Քրեական դատավարություն

1236 որոշման 6-րդ կետը, 2016 թվականի նոյեմբերի 1-ի թիվ ՍԴՈ-1319 որոշման 4-րդ կետը:

- 5 Տե՛ս Крюков В.Ф., Прокурор и его назначение в надзорном порядке уголовного судопроизводства: процессуальные и организационные аспекты, журнал Российская юстиция, 2011, N 3, էջեր 37-40:
- 6 Տե՛ս Хабаров А.В., Хабарова Е.А., Прокурорский надзор, Тюмень, 2011, էջ 52:
- 7 Տե՛ս Вартанов А.Р., Процессуальная само-

стоятельность следователя: сущность и значение, 2011, N 8, էջեր 1311-1322:

- 8 Տե՛ս Раевский П.А., Пархоменко С.А., организация правоохранительной системы в некоторых федеративных странах мира, <http://www.indem.ru/proj/rpf/OrPraOhrSiFederStra.pdf>:
- 9 Տե՛ս Հովսեփյան Ա., Թամազյան Ա., Գամբարյան Ա., Շահնազարյան Վ., Քրեական վարույթի հանրային մասնակիցների փոխհարաբերությունները, Երևան, 2015թ.,

RESUME - РЕЗЮМЕ

THE RATIO OF CRIMINAL PROSECUTION POWERS OF THE PROSECUTOR TO OBTAIN EVIDENCE AS COMPARED WITH THE CONSTITUTIONAL LEGAL FUNCTION TO EXERCISE CONTROL OVER LEGITIMACY OF THE PRE-TRIAL PROCEEDINGS

Arsen Nikoghosyan
Judge of Criminal Court of Appeal of the RA,
Candidate of Law, Associate Professor
Arnold Vardanyan
Criminal Chamber of RA the Cassation Court
Senior Assistant of Judge
YSU Faculty of Law PHD Student

In the submitted article, the authors discuss the issues that arise when a prosecutor relies on the regulations of criminal procedure code of the RA and applies to the court in order to impose arrest upon the arrest of communications, telephone conversations, postal, telegraph and other messages, and for warrants for wire-tapping the telephone conversations, searching apartments. The authors discuss the issues from the perspective of legal norms as defined by the legislator and the perspective of approaches adopted in the Constitution of the RA. Particularly, the authors discuss the aforementioned regulations in light of prosecutor's function to exercise control over legitimacy of the pre-trial proceedings.

The authors have a strong belief that the legal uncertainty of the issues raised in the article can be overcome, departing from approaches adopted in the Constitution of the RA.

Keywords: *prosecutor's function, lawfulness of pre-trial criminal proceedings, application to the court, arrest of communications, telephone conversations and messages, wire-tapping of telephone conversations, searching apartments.*

СООТНОШЕНИЕ ПОЛНОМОЧИЙ ПРОКУРОРА НА ПРИОБРЕТЕНИЕ ДОКАЗАТЕЛЬСТВ И КОНСТИТУЦИОННОЙ ФУНКЦИИ ОСУЩЕСТВЛЕНИЯ НАДЗОРА ЗА ЗАКОННОСТЬЮ ДОСУДЕБНОГО УГОЛОВНОГО ПРОИЗВОДСТВА

Арсен Никогосян
Судья Апелляционного уголовного суда РА,
Кандидат юридических наук, доцент
Арнольда Варданян
Старший помощник судьи Уголовной палаты Кассационного суда РА,
Аспирант юридического факультета ЕГУ

В представленной статье анализируются основные вопросы, возникающие в случае, когда прокурор опирается на положения Уголовно-процессуального кодекса РА и обращается в суд с ходатайством о наложении ареста на корреспонденцию, почтовые, телеграфные и другие сообщения, о прослушивании телефонных переговоров, обыске жилища. Проблема рассматривается как с точки зрения правовых норм, установленных законодателем, так и с точки зрения подходов, принятых в Конституции РА. В частности, авторы анализируют вышеупомянутые положения в свете функции



Քրեական դատավարություն

прокурора осуществлять надзор за законностью досудебного уголовного производства.

По убеждению авторов, правовая неопределенность вопросов, поднятых в статье, может быть разрешена в рамках подходов, принятых в Конституции РА.

Ключевые слова: функция прокурора, законность досудебного уголовного производства, обращение в суд, арест сообщений, телефонных разговоров и сообщений, прослушивание телефонных разговоров, обыск квартир.

Բանալի բառեր - դատավարական գործառնություն, մինչդատարանական վարույթի օրինականություն, միջնորդության ներկայացում դատարան, նամակագրության, փոստային, հեռագրական և այլ հաղորդումների կայանք, հեռախոսային խոսակցությունների լսում, բնակարանի խուզարկություն

ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2018 5 - 6 (227-228)

ԴԱՏԱՎԱՐ
Իշխանություն